ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ
№ 31

ՏԱՐԵԿԱՆ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆԵՐ

Թուրքիոյում . . . . . 14 ղրուշ
Գաւառներում . . . . . 20 ղրուշ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Ռուսաստան . . . . . 4 բբ. 50 կ.
Թուրքիա . . . . . 50 ղրուշ
Եւրոպա . . . . . 12 ֆրանգ
Ամերիկա . . . . . 2 տոլար 5 ս.

Յայտարարութիւնների վճարը
Առաջին երեսում տողատեղը 10 շահի
Զորրորդ ,, ,, ,, 5 »

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ 6 շահի

Խմբագրութեան հասցէն՝ Թաւրիզ
ՄԻՏՔ-ի խմբագրութիւն կամ Tauris (Perse)
Rédaction du journal Armén. «MITK»

ՄԻՏՔ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ—ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԲԱՂԱԲԱԿԱՆ

ادارهٔ روزنامهٔ «میطق»

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Մեզ գրողներից խնդրւում է գրեն պա[illegible] և անպայման թղթի առտջին երեսի [illegible]
2. Խմբագրութիւնս իրեն է վերապահո[illegible] նք՝ ստացուած յօդուածները փոփոխութեա[illegible] տումներով հրատարակելու։
3. Մենք մերժում ենք ,,ա'' ի և ,,վ'' ի [illegible] ան հերձուածը և մեզ ենք վերապահում իրա[illegible] ցուած նիւթերը տպել մեր ընդունած [illegible] եամբ -ու-ով։
4. Չտպուած կարճ յօդուածները չեն վերադ[illegible] ւում։ Ուղարկուած և չտպուած երկար նիւթերը յետ ստա- նալու համար պէտք է ուղարկել պօստի ծախսը։
5. Չի տպուի ոչ մի յօդուած եթէ դա կեղծ անուան հետ միաժամանակ չի կրի յօդուածագրի անունն ազ- գանունը։
6. Բաժանորդները թերթ չստանալու դէպքում շու- տով տեղեկացնելու են մեզ՝ հակառակ դէպքում խմ- բագրութիւնս իրեն դերծ է համարում պատասխանա- տուութիւնից։
7. Չտպուած յօդուածների համար խմբագրութիւնս բացատրութիւններ չի տալիս։
8. Հասցէները փոխելու համար պէտք է մեկ ուղարկել 2 ղրուշ 10 շահի։

№ 31 1912 Թ. ՇԱԲԱԹ 20 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1912 Թ. № 31

ԿԱՐԴԱՑԷՔ

Քաղաքական միակ լուրջ հայ օրգան, բազմաբովանդակ, դաստիարակիչ և յոյժ զարգացուցիչ

„ՆՈՐ-ԱՇԽԱՐՀ"

Բաժանորդագրութիւնը Պարսկաստանի համար 12 բուբլի։ Բաժանորդագրուել ցանկացողները դիմելու են թերթիս խմբագիր-հրատարակչին։ Ապառիկ պատուէր չի ընդունւում։ *Խմբ.*

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ծախւում է Լիլաւա թաղի հայոց բաղնիսի յետևում գտնուող Մուսթաշարի թուրքական բաղնիսը, գնել ցանկացողները թող դիմեն յայտնի դէպքերին վախճանուած Սիղաթ-էլ-իսլամի տունը (Շեշկիլանում) և հարցնեն Ռիզա խան Մօա-էդ Զադէին։

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԵՒ ԱՆՀԱՏԸ

سعادت و شقاوت ملت بسته بسلوك سلاطين باشد دنيادار انقلاب است در سختى دل داشته باش و در رفاه و خوشى بملايمت و عقل رفتار كن آن نما كه رعايا يعنى آنها كه خداوند بتو سپرده بعد از تو بذكر خير ما پردازند و براى ما طلب آمرزش نمايند

Վերոյգրեալ պարսկերէն հատուածը Սասանեան պետութեան հիմնադիր Արտաշիրի քաղաքական կտակն է իւր որդի և յաջորդ Շապուհին։

Մեռնող հայրը թելադրում է որդուն իւր վերջին կամքը, որ է.

—Ազգի բաղդաւորութիւնն ու թշուառութիւնը պայմանաւորուած է թագաւորների վարուեցողութեան հետ։

—Աշխարհը յեղափոխութեան որորանն է։

—Խստութեան մէջ սրտապինդ եղիր. խաղաղութեան ու սիրոյ մէջ մեղմ և խելօք վարուիր և այն ցոյց տուր, որ հպատակները, այսինքն նոքա, որոնց աստուած յանձնել է քեզ, քեզնից յետոյ մեր մասին լաւ յիշեն ու խօսեն, և մեր (մեզաց) թողութեան ցանկացողները լինեն։

Իւր դարու պետական փիլիսոփայութիւնն էր դա, որ յայտնի աստիճան ճշմարտութիւն է բովանդակում իւր մէջ։

Հին դարն անգամ, գոնէ, այնքան հասկանում էր, որ հպատակների հետ պէտք է անպայման լաւ վարուել և բարի յիշատակ թողնել։

Տարաբաղդաբար Պարսկաստանում շուտ մոռացուեց այդ շատ պարզ փիլոսոփայութիւնը, մոռացուեց և ժողովուրդը, որին միայն կողոպտել, ճնշել և խաւար են պահել մեր շահնշահները։

Չիզ դարերի ընթացքում մեր շահնշահները մտածեցին բացառապէս իրենց անձի, զուարճութեան և շուայտութեան մասին։ Մոռացան իրենց գահին սիւն և յենարան եղող պարսիկ դժբաղդ բայց ընդունակ ու ազնիւ ժողովրդին, ուստի և երկուսով էլ ընկան, թուլացան և թշուառացան։

Ե՞րբ մեր կառավարութիւնը հոգաց ժողովրդի ուսման, դպրոցների բացման, վաճառականութեան ծաղկման-զարգացման, ճանապարհների շինութեան, երկրագործութեան բարձրացման, բանկերի ու վարկային հաստատութեանց ստեղծման, ժողովրդական առողջապահութեան, զինուորական դիսցիպլինայի, քաղաքների մաքրութեան, գեղարուեստի և այլ նման կարիքների մասին։

Հազարաւոր տարիներ անցնելուց յետոյ, այսօր ևս մեր գիւղացին նոյն ճռնչող սայլն է գործածում, ինչ գործ էր ածում նրա նախապապը Նոյի օրերում, նոյն ճահիճով, դար ու փոսերով է գնում, որ անփոփոխ մնացել են ստեղծագործութիւնից այս կողմ։

Տարօրինակն այն է, որ կառավարութիւնը ժողովրդին ոչինչ չտալուց բացի, միշտ նորան կթել է, թողել է կալուածատիրոջ, խանի և աղայի լիազօր կամ, այսինքն առաջ՝ բոլորովին անպաշտպան։

Մի հարուստ, մի գիւղատէր հազարապատիկ աւելի պատուաւոր է համարուել կառավարութեան աչքում, քան տարին 12 ամիս նորանից կեղեքուող աշխատաւոր շինականը, որ պետութեան հոգին է ու կերակրողը։ Ուրիշ խօսքով պարսից կառավարութիւնը միշտ արտօնեալ դրութեան մէջ է պահել անհատին, աղային, կալուածատերին, իսկ աշխատաւորին, իրաւազուրկուածին, մի խօսքով ընդհանուր ժողովրդին միշտ խփել, լռեցրել և ճնշել է։

Դա ինքնահակասութիւն է և տրամաբանական աբսուրդ և պետական սխալ հասկացողութիւն, որ առաջնորդում է երկիրը դէպի կործանում։

Նորագոյն փաստ՝ ահա ձեզ Հաջի Թաղին և Սալմաստի հայ ու թուրք ժողովուրդը։

Եկար ամիսներ է, որ առաջնորդարանը անհերքելի դոկումենտներ է տեղացել ու տեղում նահանգապետութեան դուռը, ապացուցանելով գիւղացոց իրաւունքն ու զրկանքը և հաջու ճնշումն ու ապօրէն պահանջները, ստանում է խիստ հրամաններ, բայց և այնպէս հաջին մնում է Սալմաստում և հանում ժողովրդի հոգին։

Որքան մենք տեղեկացել ենք, ժամանակին առաջնորդարանը կրտրուկ հրամաններ է ստացել Հ-ջի Շօջա-էդ-Դովլից, նոյնը վերջերը ստացել է և Սփահդար Աղամից, որ Հաջի Թաղին բերուի կամ գայ Թաւրիզ և նորա պահանջը այս տեղ քննուի, սակայն նա էլի չի շարժուել իր տեղից։

Անգամ, շնորհակալ ենք, Սրփահդար Աղամը առանձին քննիչ է ուղակել Սալմաստ։ Քննիչը իւր զեկուցման մէջ իրաւացի է համարել թուրք ու հայ գիւղացոց, բայց և այնպէս Հաջի Թաղին շարունակել է մնալ Սալմաստում ծեծել ու բանտարկել գիւղացոց, և, ով վայրագութիւն, թակել է տուել կանանց և բանտարկել հայ քահանայի։ Մինչդեռ մեծ Նասրեդին շահը առանձին սիրալիրութեամբ կվերաբերուէր դէպի հայ քահանան։

Հաջի Թաղու բռնութիւնները նիւթ դառան Կովկասեան հայ, ու ինչպէս լսում ենք, և ռուս մամուլի դժգոհ քննութեան։ Վերջերը Ներսէս վարդապետը, պ. պ. Զ. Նազարբէգեանը, Զ. Բուդաղեանը այցելեցին Սփահդար Աղամին, պարզեցին գիւղացոց արդահատելի դրութիւնը, ստացան սրտապնդող խոստումներ, բայց և այնպէս էլի Հաջի Թաղին մնաց իշխող, բանտարկող և անձեռնմխելի։

Երևում է գաւառական իշխանութիւնները սխալ, անճիշտ և մոլորեցնող տեղեկութիւններ են տալիս Սփահդար Աղամին։

Մենք՝ որ լաւագոյն յիշողութիւններ ունինք Սփահդար Աղամի մասին, որպէս ժողովրդական ազատագրական շարժման պարագլխի, վստահ ենք, որ նա ի վերջոյ մեծ արդարութիւն կանի Սալմաստի աշխատաւոր ժողովրդին և կվերացնի այն մեծ դժգոհութիւնը, որ տիրում է այդ առթիւ Արաքսի այս ու այն կողմերում հայոց մէջ։

Մենք կարծում ենք Նուշիրաւան Ադէլը[1]) մի բացառութիւն չէ Պարսկաստանում։ Սփահդար Աղամը, որ սուր է մերկացրել յազատութիւն տառապած ժողովրդի, անշուշտ կանի պարտ ու պատշաճը ազատելու Սալմաստը Հաջի Թաղուց և կխլի երկրորդ Նուշիրաւան Ադէլի պատուանուն կամ պատճառ կդառնայ որ ժողովուրդը իւր մասին պահի այնպիսի վառ և գեղեցիկ յիշողութիւններ, որոնց մասին դեռ 1000-աւոր տարիներ առաջ Արտաշիր Սասանեանը խօսում էր իւր որ-

[1]) Արդար

դի Շապուհին։

Շուրջ 6 տարուայ ազատագրական շարժումներից և թափուած զոհերից յետոյ [illegible] պէս յայտնի [illegible] մեր սահմանները չլսեն անվերջ զանազան [illegible] թաղիների ճնշման և թշուառ ժողովրդի կեղեքմանց մասին։

Մենք այդ ենք սպասում մեր բարձր կառավարչից—Սփահդար Ազամից։ Եւ անշուշտ զօրացած ու հաստատուած կլինինք մեր յուսոյ և ակնկալութեան մէջ։

ՊԱՏՄԱԿԱՆ ՆԻՒԹԵՐ [1])

ԱՐԱՄԵԱՆ ԴՊՐՈՑԻ 60-ԱՄԵԱԿԻ ՀԱՄԱՐ

—

Մի անգամ արդէն յիշել՝ այժմ էլ շեշտում ենք, որ 1879-ի գործադիր մարմինը կամ հոգաբարձութիւնը, ինչպէս այդ ցոյց են տալիս մեր ձեռքի տակ եղած աղբիւրները, եղել է միակ վարչութիւնը, որ մտածէք է ունենալ թէ դպրոցական և թէ հոգաբարձական որոշ և հաստատուն կանոնադրութիւն։ Ապօրինութիւնը և կանոն չսիրելը դա ընդհ. հայկական թեռի մի կողմ է։ Գոհ պէտք է լինել, որ գոնէ 33 տարի առաջ մեր անուսում հայրերը օրուայ պահանջ են զգացել կանոնագրի պակասը և մշակել այդ, որպիսին չունենք մենք այսօր՝ մեր այսքան «զարգացած» և «յառաջդիմած» օրերում։ Որքան հնար եղաւ եղրակացնել մեր աղբիւրներից, ուսումնական ծրագիրը, դպրոցի ղեկավարութիւն և կանոնադրութեան յօրինումն և այլն բղխել են հանգ. Ն. Գոբոյեանից։

Ստորև առաջ ենք բերում այն կանոնադրութիւնը, որ իր գործունէութեան համար մշակել է գործադիր ժողովը և կոչել այդ «ներքին կանոնադրութիւն,» որ մշակուել է երրորդ նիստում, գումարուած առաջնորդարանում՝ 4 օրակարգով։

Ներքին կանոնադրութիւն.

1. Գործադիր ժողովն ամիսը մի անգամ նիստ պիտի ունենայ Առաջնորդարանի մէջ, այս նիստը պարտաւորիչ է և տեղի կունենայ իւրաքանչիւր ամսոյ սկզբի առաջին ուրբաթ օրը՝ առաւօտեան եկեղեցու արձակմանից անմիջապէս յետոյ։

2. Հարկը պահանջած ժամանակին՝ արտաքոյ կարգի նիստեր կարող են տեղի ունենալ։

3. Գործադիր ժողովի անդամներից մէկն՝ կարող է հարկաւոր համարած ժամանակին՝ գործիչներին ժողով կոչել տալ Ատենադպրին միջոցով, սորա մասին ցանկացող գործակալն մէկ տոմսակով Ատենադպրին իմաց կտայ՝ որ մասնաւոր տոմսակներով գործակալներին ի ժողով հրաւիրէ՝ օրն և ժամն որոշելով հանդերձ։

4. Ժողովին ներկայ չգտանուող գործակալն իրաւունք չունի ժողովի որոշումն չընդունելու, այլ կարող է միայն իւր անհամաձայնութիւնը արձանագրել տալ որոշման դէմ։

5. Ամեն խնդիր գործադիր ժողովի մէջ ձայների առաւելութեամբ կլուծուի՝ սակայն կարևոր խնդիրներն ամենապարզ ձևի վերածելով քուէարկութեամբ պէտք է լուծուին։

6. Ատենակալ խորհրդականները [illegible] Ատենադպրի, գանձապետի, [illegible] Հոռոմնի և իւր ներ[illegible]ձ-ձեռնա[illegible] նորանց արած կարգադրութիւնները կարող են փոփոխել, բայց եթէ [illegible] բանց վերայ մէկ պակասութիւն նշմարեն և արածները ապօրինաւոր կամ վնասակար համարեն, յայնժամ կարող են Ատենադպրի միջոցով բոլոր գործակալներին ի ժողով կոչել և խնդիրը ժողովի մէջ լուծել։

7. Ատենադպրի պարտաւորութիւնն է կանոնադրութեանց և արձանագրութեանց տետրակները պահել՝ գործադիր և ընդհանուր ժողովների նիստերը՝ ժողովի մէջ եղած առաջարկութիւնները՝ որոշումները՝ բողոքագրերը և այլն թուականով արձանագրել և ժողովի գործառնութեանց վերաբերեալ ամեն թղթակցութիւնները անել, այս ամենի մէջ ամենամեծ ճշտութիւն պահելով։

(Շարունակելի)

Ա. Տ.-Վ.

ՀԱՐՍՏԱՆԱԼՈՒ ՄԻԶՈՑ

—

1911 թուի Շարլրուայի (Բելջիքա) էքսփոզիսիոնի վիճակախաղի կոմիտէն ցանկանալով ծանօթացնել իւր վիճակախաղի մասին ամբողջ աշխարհին, դիմել է Շարլրուայի էսպերանտիստների ընկերութեան օգնութեան և խնդրել նրա միջնորդութիւնը զանազան ընկերութիւնների մօտ, որ դրանցից իւրաքանչիւրը ծանօթացնէ իւր քաղաքի ազգաբնակութեան այդ մեծ վիճակախաղի մասին և վաճառէ տոմսակներ։

Ինչպէս բոլոր երկրների էսպ. ընկերութիւնները, նոյնպէս և Թաւրիզինը ստացել է երկու նամակ, մէկը Շարլրուայի էսպ. ընկերութիւնից, իսկ միւսը վիճակախաղի քոմիտէից, որոնցով դիմում են մեզ օգնելու իրենց այդ գործում։

Ուստի սրանով Թաւրիզի հայ ազգաբնակութեան ուշադրութիւնն ենք հրաւիրում այս վիճակախաղի վրայ (ä tiraje), որի վերաբերեալ տեղեկութիւններ տալիս ենք ստորև։

Այս վիճակախաղը, որը թոյլատրուած է Բելգիական կառավարութեան կողմից և գտնուում է նրա անմիջական կօնտրոլի ներքոյ, խաղացուելու է ամենաուշը 1913 թուի Յունիս վերջին։

Շահող տոմսակներն են։

1 տոմ.	1,000,000	ֆր.	2,000,000	դր
1 «	124,000	,,	248,000	,,
1 «	62,000	,,	124,000	,,
1 . «	31,000	,,	62,000	,,
1 «	15,500	,,	31,000	,,
10 « իրսմանչիր	10,000	,,	20,000	,,
25 « «	5,000	,,	10,000	,,
80 « «	1,000	,,	2,000	,,

150 « զանազան գեղարուեստական հրատարակութիւններ, որոնք արժէն բոլորը միասին 70,000 ֆր. 140,000

Վերոյիշեալ շահող տոմսերը իրենց ամբողջ արժէքով դրուելու են վիճակախաղի մէջ, ինչ էլ որ լինի ծախսուած տոմսերի թիւը, վիճակախաղը խաղացուելու ժամին։

Շահող տոմսակներից առաջին 5-թ. վրայ 5% զեղչ է արուելու յօգուտ մի կամ մի քանի բարեգործական ձեռնարկութիւնների կառավարութեան և վիճակախաղի կոմիտէի հրդակցութեամբ։

Իւրաքանչիւր տոմսակը արժէ 1 մանկ. [2 դր. 4 շահի]

Տոմսակ ցանկացողները դիմեն Թաւրիզի էսպերանտիստական ընկերութեան հետևեալ անդամներին Արտաշէս Տէր-Յովհաննիսեան, Յովսէփ Զէմալ և Վաղինակ Սարգսեան։ Ուրիշ քաղաքներից դիմեն այս հասցէով, Արտ. Տէր-Յովհաննիսեան Անգլիական բանկում Թաւրիզ։

Ի դիմաց Թաւրիզի էսպերանտիստական ընկերութեան

Արտ. Տէր-Յովհաննիսեան

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

12 Սեպտ. Էնզելի

Անցեալ անգամ գրած էի, որ Թալիշի պետ Զարղամը աքսորից վերադառնալով իւր շուրջն է հաւաքել Թալիշցիներին և այն քարկարցիներին, որոնք տարիներից իվեր դժգոհ են Ամիտ Սալթանից։ Մոռացել էի յիշել որ Ամիտ Սալթանի մեծ տղան՝ Արֆայ Սալթանն ևս դժգոհների կողմն է անցել ընդէմ իւր եղբօր Սաղար Աստղի։

Օգոստոս 18-ին 240 հոգուց բաղկացած Ռուսական մի զօրամաս Ռեշտից գալով՝ ճանապարհուեց Թալիշի և Քարկարու կողմը, ըստ տարածուած լուրերի, իբր թէ զօրքը գնաց Զարղամին և իւր համախոհներին պատժելու։ Իբրև ապացոյց ասում են, որ 500 հոգի զօրք էլ Արտաբիլից Մալխալի վրայով է ճանապարհուել, որպէսզի երկու կողմից շրջապատեն։ Մինչ օրս Արդաբիլից գացող լուրը չճշտուեց։ Այստեղից գնացողներն էլ 64 վերստ հեռաւորութեան վրայ գտնուող Ալալանից դէն չեն անցել։ Երբ զօրքը Ալալան հասաւ Սալար Աստղը, որ առանց ժողովրդի ցանկութեան դատաւոր էր գնացած Քարկարի՝ իւր համախոհ Վալիբանի հետ եկաւ Ալալան։ իսկ քարկարցիք իրանց համար դատաւոր նշանակեցին այն Արֆայ Սալթանին, որին 1907 թիւ մայիս 8-ին թալանել էին, և Քարկարու սահմաններից դուրս քշել։

Թէ Սալար Աստղը և թէ Ամիտ Սալթանէն չկարողացան հաշտուել այն մտքի հետ, որ Արֆայ Սալթանէն լինի դատաւոր։ Մինչդեռ առաջինի մեծ եղբայրն է իսկ վերջինի տղան։

Երբ Սալար Աստղը անցաւ Ռուսաց զօրաբանակի մէջ քարկարցիք Արֆայ Սալթանին ամառանոցի սարից բերեցին Քարկարի, որպէս դատաւոր։ ամսիս 9-ի գիշերը Ռուսաց զօրքը առաջնորդութեամբ Սալար Աստղի և Վալիբանի շրջապատելով Արֆայ Սալթանի Քարկարու տունը 14 հոգու ձերբակալեցին։ 10-ին «Կրասնավօտսկի» պատերազմական նաւը բռնուածներից 8 հոգու այստեղ բերելով՝ ճանապարհեցին Ռաշտ, որոնց մէջ է նա և Արֆայ Սալթանան թէ և Քարկարցիք Արֆայ Սալթանին սիրում են և եթէ նրան թալանեցին հօր բռնապետութեան պատճառաւ, բայց ինձ թւում է, որ հնարագէտ Ամիտ Սալթանան այդ տեղ խաղ ունի սարքած։ Տեսնելով որ ժողովուրդը փոքր տղին դատաւոր չընդունեց և որպէս զի նրանց կարողանայ պատժել՝ Արֆայ Սալթանին ուղարկած լինի նրանց հետ միանալ, որպէսզի ըմբոստներին բռնել տալով պատժի և ազատ կերպով տիրանայ իւր կալուածներին։ Ցամենայն դէպս ապագան ցոյց կաայ հարցը ինչումն է։ Բռնաւուածների մէջ են մի քանի հոգի այս տարուայ մարտի վերջերում Ռուսաց զօրքի հետ ընդհարուողներից։

Շրջապատուածների մէջ էր յայտնի սէյիտ Աշրաֆը, բայց նա գիշերուան մթութիւնից օգտուելով՝ կարողացել է փախչել։

Թէ Զարղամի գլխին ինչ խաղ պիտի սարքուի այդ ևս շուտով կիմացուի, որովհետև զօրքը գնացել է խաղաղացնելու և մաքրելու այդ շրջանը հաւանօրէն նրան էլ ծուղակ պիտի քցեն։

Անհաշտ

26 Սեպտ. Ուրմի

Զբօսաճի դէպի Տաճկաց վերջերս գրաւած գիւղերը

—

Երկուշաբաթի առաւօտեան, նախօրօք կայացրած որոշման համաձայն, երկու ծանօթ ընկերների հետ ձիով ուղևորուեցինք դէպի Բարանդուզ կոչուած կողմը։

Կտրելով 2-3 ժամուայ ճանապարհ՝ հասանք Բարանդուզ գետակը, որից դէնը գտնուում է Տաճկաց տիրապետութեան ներքոյ։ Անցնելով կամուրջը պատահեցինք մի քանի տասնեակ սահմանապահ ասկերների, որոնք տեղաւորուած էին վրան կիսալուսնի դրօշը ծածանուող պահականոցում և որոնց կողմից առանց հարցաքննութեան ենթարկուելու շարունակեցինք ճանապարհը։ Հասնելով Բալանէշ ասօրի և հայաբնակ գիւղը, որտեղ կար մօտ մի հարիւրեակ զօրք, իջևանեցինք հայ քեօխուայի տանը։ Այդտեղ էր գտնուում և գայմագամը, որ եկել էր մի քանի օրով զանազան գործեր քննելու կարգադրելու համար։ Մեր ընկերներից մէկը գայմագամի հետ իւր մասնաւոր գործն ունենալու պատճառով ներկայացանք վերջինիս։ Սա, մօտ 22-24 տարեկան Կ. Պոլսում կրթուած երիտասարդ էր. մեզ սիրալիր ընդունելուց յետոյ անցաւ մի քանի գիւղացիների դատը վարելու։

Առանց Պարսիկ դատաւորներին յատուկ գոռոզութեան, իւրաքանչիւր գիւղացու նստեցնում էր հարցաքննում, իւր ձեռքով արձանագրում, ապա ըստ իւր հայեցողութեան-որ աչքի էր ընկնում իւր աշխարհութեամբ-դատելով արձակում։ Մի ժամեայ խօսակցութիւնից յետոյ թողինք Գայմագամի սենեակը լաւ տպաւորութեան տակ։

Մասնաւոր հետաքրքրութեամբ, իմացանք որ ընդհանրապէս գիւղացիք գոհ են իրենց վիճակից-իշխող կառավարութիւնից։

Սրտաբուղխ ուրախութեամբ պատմում էին որ այդ գիւղերը Տաճկաց հովանաւորութեան ներքոյ անցնելուց յետոյ, իրենք զերծ են զանազան

---

[1]) Սկիզբը տես «Միտք» № 21-ի 1 յաւելուածը թիւ 4., № 21-ի 11 յաւելուածը թիւ 5 և «Միտք» № 22.

խարջ ու բէգարից և որ գլխաւորն է քրդական ալան թալանից։

Պէտք է ասել որ կառավարութիւնը խիստ ճնշում գործ դնելով քրտերի վրայ զինաթափ անելով նրանց՝ յատուկ ուշադրութիւնն է դարձնում այդ նոր գրաւուած տեղերի ազգաբնակութեան անդորրութեան, հանգստութեան վրայ։

Դալով հայ գիւղացիների մասին՝ որոնք թրքախօս են, հարկ ենք համարում ասել որ շատ աննախանձելի կացութեան մէջ են։ Զուսենալով հոգևոր, տէր։ մնացել են կատարեալ անտէր. ոչ դպրոց, ոչ եկեղեցի (եթէ չհաշուենք մի կիսակործան նկուղ)։ Իրենց հարևան քիւրտ ու պարսիկ գիւղացիներից տարբերողը միայն «Խայ քրիստոնեաբե» «քրիստոսա կուրբան օլսա» բառերն են։

Անցնելով մի այլ գիւղից՝ հանդիպեցինք մի կնոջ հայ ծերուկի, որը մեր գալը լսելով, ցանկացել էր մեզ մօտենալ։

Ծերուկը խօսում էր հատ ու կտոր հայերէն. իմ հարցուցին թէ ինչպէս է եղել որ դու գիտես հայերէն իսկ միւսները ոչ-պատասխանեց.

—Աղա, ես խին եմ, ես շատուցուայ եմ, ես գինամ։

Արդեօք քո ժամանակակից բոլորը գիտէին, հարցրի նրան.— Այո. պատասխանեց.

—Ապա ինչու՞ ձեր զաւակներին փոքրերին չէք սովորեցրել։

—Ահ, տաղ (այստեղ) քիւրդի, քիւրդիստանի, քիւրդի մէջ ենք, ինչ ենք անելի խայերէնը. եղաւ ծերուկի պատասխանը։

Իրօք, իրենք անտէր-ադէտ. նոր սերունդը աւելի վատ ու քառակուսի այլասերման անդունդի ծայրին-եթէ ոչ արդէն անդունդի մէջ. Սրա վրայ ենք հրաւիրում Ատրպատականի թեմական ուշադրութիւնը։

Անուշադրութեան մատնուելով, չանցած երկու սերունդ արդէն մայրենի լեզուն վատրուել է. և եթէ կարճ ժամանակ էլ այդպէս շարունակուեց, այդ կողմի հայութեան վրայ պէտք է խաչ դնել. գոնէ ես եկայ այդ համոզման։

Հ. Թեան.

Սեպ. 24 Սովուչբուլաղ

Զարդովլի Ամիր-Փումարը 300 (հարիւր) ձիաւորով երեք շաբաթից իվեր գտնուում է այստեղ. ի մօտոյ սպասուում են նաև մեծ թուով սարբազներ (թէ հետևակ և թէ ձիաւոր), որոնք, ըստ շրջող լրոց, քիւրդերից պիտի գանձեն մի քանի տարուայ ապառիկ մալիաքները և ապա պահանջեն պետական հրացանները՝ ցրուած Ֆարման-ֆարմանից և Հաջի Շուջաուդ-Դովլայից, որպէս նաև իրանց սեպհական զէնքերը։ Ինչպէս լսում ենք, Դէբօքբրցիք, առանց այլ և այլութեան պատրաստ են վճարելու կառավարութեան հարկերը. իսկ զէնքերը յանձնել յօժար են այն դէպքում միայն, եթէ առաջ հադդիսադից, այսինքն սահմանում (օսմ.) եղող քիւրդ աշիրաթներից-Մանգուր, Մամաշ, Զարգա...լրիւ, ամբողջովին հաւաքեն, որոնց հետ այնքան էլ հաշտ չեն և կարող են մեծապէս տուժել։

Դարալաքի հայ եկեղեցու սիւնները ու գերանները, ինչպէս և ժամատան բակի ծառերը Հաջի Էլխանին տարել է ի պէտս իւր շինութեան։ Այդ սրբավայրը, որի մի պատն է կանգուն միայն այժմ, ծառայում է անցուդարձի։ Անարգուած է նաև սուրբց եկեղեցին, որը իբրև կենդանեաց տեղ գործ է ածւում.»

Օսմանեան շահբանդարն իբրև պահակ ունի 30-ի չափ սուվարներ [հեծելազօր), որոնք, ճշմարտութեան դէմ չմեղանչելու համար, պէտք է խոստովանել որ իրանց կօրրեկտ են պահում և դա, անկասկած, շնորհիւ իրանց սպայապետին (շէխ-Իսմայիլ էֆ.) որ մի զարգացած և լուսամիտ երիտասարդ է։

Խաչ.

---

2 Հոկտեմբեր Թէհրան

Նոր ընտրութիւնների շուրջը

Մի քանի օր առաջ արդէն ներքին գործոց նախարար Մօհթաշամ Սալթանէի ստորագրութեամբ, մի յայտարարութիւն էր լոյս տեսել Մէջլիսի նոր ընտրութեանց համար, իսկ երեկ էլ՝ թէև երկուշաբթի՝ պետական պաշտօնեաների հանգստութեան օր էր, բայց և այնպէս ներկայ մինիստրական կազմը ամբողջութեամբ, նաև նախկին մինիստրները և պետական անձնաւորութիւնները միասին, Դարբարում ունեցան մի խորհրդակցական ժողով նոր Մէջլիսի ընտրութեանց համար։ Ժողովը տևել է մինչ երեկոյ, բայց և այնպէս առանց մի որոշ դրութեան յանգելու ցրուել է։

Այս օր դարձեալ նոյն նպատակով և նոյն անձնաւորութիւնները ունեցան նիստ և համարեա, յաջող էր որոնցից ընտրուեց մի ժամանակաւոր գօմիսիօն Նախագահը Սարդար Ասադն է, իսկ օգնականներ՝ Վսուղ դովլէ, և Հաջի-Հիւսէյն աղա։ Ցիշեալ գօմսիօնին յանձնուել է մշակել ծրագիր և ընթացք տալ ընտրութիւններին։

Ուրեմն այլ ևս կասկած չկայ, որ որ մօտաւորապէս մի տարի փակ մընալ շարունակող Մէջլիսի դռները, նախապէս ստանալով իրենց անհամար զոհերը, վերստին բացուել են կամենում։ Բայց հարցը նրանում է կայանում, թէ արդեօք առաջիկայ Մէջլիսը ինչպիսի մարդկանցից է կազմուելու։ Մայրաքաղաքի ազգաբնակութիւնը միանգամայն անտարբեր է հանդէպ ընտրութեանց, որին ամիսներ առաջ սպասում էր ինքը։ Իսկ այդ մեռելային անտարբերութիւնը պիտի բացատրել նրանով, որ նա կասկածանքով է նայում այդ բոլորի վրայ, առաւել ևս այն պատճառով, որ իր ընտրելին պատգամաւորական պաշտօնն ստանձնելուց գուցէ չվաւերացուի խնամակալական կառավարութիւնների կողմից։

Այդ օրինակ մատնիչներ ևս եղել են վերոյիշեալ ժողովում։ Այսպէս՝ արտայայտուեցին Զահիր Դօվլէն, (Տէրվիշպետը), որ իբր թէ իր ճառում ասել է. «Մենք իզուր ենք մեզ ճանաչում անկախ երկրի տէր, հարկ կայ նախ դիմել Ռուս-Անգլիական կառավարութիւնների կարծիքին և ապա անել այն, ինչ որ կամենում են նրանք»։

Իսկ ինչ վերաբերում է գաւառներին՝ այդ շատ պարզ է։ Նրանց դրութիւնը այքան անտանելի է, որ գաւառացին ոչ թէ չի կարենալու ընտրել և ընտրուել, այլ և նա իր գլուխը նկատում է մի աւելորդ բեռ իւր ուսերի վրայ, ու բոպէ առ բոպէ սպասում է որ հիմայ պիտի գլխատուի թէ մի ժամից յետոյ։

Այս տեղ եթէ կայ մի «երջանիկ» տարր, դա հայ տարրն է, որ «իսկզբանէ անտի» պայմանաւորուել է պա-

---

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴՊՐՈՅԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ ՂԱՐԱՂԱՆՈՒՄ*)

Նախքան նրանց գնալը գնացել էր և Տէր Վարդանը իր սեփական գործով։ Լսեցինք որ նրանք Թէհրանում ժողով են արել, ուր խայտառակուել է Տէր Վարդանը, բայց խնդիրը վերջացել է նրանով, որ խայտառակուողը գրաւոր ներեղութիւն է խնդրել։ Այն մարդիկ որ աշխատում էին խանգարել, նրանք էլ ուսուցիչ չուղարկեցին։ Մենք շարունակեցինք մնալ առանց ուսումնարանի մինչ 1910 թուի մայիս ամիսը։ Ցանկարծ ճարուեցին մի քանի ինքնակոչ պարոններ, սկսեցին տեսակ-տեսակ քաղցր խօսքերով ցոյց տալ ուսումնարանի անհրաժեշտութիւնը։ Այն քահանան որ թշնամի էր՝ այս անգամ բոլորովին նրա հակառակն էր խօսում։ Նա ասում էր թէ սրանք Դաշնակցականներ են, Ֆրանգստան Ֆրանգների, Արապիստան Արապների համար են ուսումնարան բացում, ուսուցիչների բոլորն էլ համասարանական են, մենք էլ հաւատում էինք, որ այս անգամ առաջուանից լաւ պիտի լինի, նրա համար՝ որ նախորդ 1905 6 թուի ուսուցիչները վարձ ու գրքի փող չէին ստանում կարծելով վերջինները մի բան էլ ձեռաց կտան։ Վերջապէս նրանք ձեռնարկեցին մի հանգանակութիւն թէև ես այդ անունը տուի. բայց նշանակովի տուրք էր և գիւղացիների կարողութիւնից շատ բաձր. մի կերպ համակերպուեցինք նրա համար՝ որ ուսումի համը նախապէս զգացել էինք, իսկ այժմ էլ ծարաւի նման կարիք էր զգացուում ուսումնարան ունենալու։

Բաց արեցին երկու ուսումնարան, մէկը Ներքին Զանախչի, իսկ միւսն էլ Լառ. ինչ որ տալիս էին՝ փողն էին առնում. նրանք իրանց հետ բերել էին մի քանի հատ հոտած փտած վարանտիլ հրացաններ. այն հրացանները որ մեծ թալանի ժամանակ ձեռք էին բերել։ Հատին տասն վեց թուման արժէք որոշելով՝ զօրով գիւղով փաթաթեցին մեր գիւղացիքի վզին՝ հինգական թուման էլ կանխավճար ստանալով։ Եկաւ կալի ժամանակ, նշանակովի տուրքերը գանձեցին, չնայելով որ շատերի կարողութիւնը չէր խոստանում բայց ճարն ինչ էր, ահա այդ պէս վերջացաւ 1910-11-ի տարէ շրջանը. եկաւ 1912 ներկայ պատմական տարեթիւը. Օգոստոս 20-ից յետոյ երևացին երեք հեծեալ «ազգասէրներ», որոնց մէկի անունը Հայկ է, մէկինը Սարգիս, իսկ նրանց մեծը երբեմն Արշալոյս, երբեմն Լուսիկ, պատահած էլ...մոռանում եմ... ուրիշ անուն էր ասում։ Ոմանք հիւրասիրեցին. ոմանք էլ այցելութիւններով բարի գալուստ մաղթեցին։ Բայց դու մի՛ ասա որ դրանք դասաբ է։ եկել մեր գլխին ու մենք չենք իմանում։ Անցաւ մի երկու օր նրանք սկսցին բռնի հաւաքել հրացանների դրամները, ոմանք վճարեցին, ոմանք անկարող լինելուն չկարողացան տալ, օգոստոսի 30-ին նրանք հաւաքեցին հրացանները, չամամախները հանելով լեցրին Միրզա Բաբախանենց մնուկի մէջ և կողպեցին և ապա գալով կալերը՝ շարունակեցին խոտիւ պահանջել թէ վարժապետների ռոճիկները և թէ հրացանների դրամները, մէկը ասեց չունեմ որ տամ, միւսը մինչև մեր վճարած դրամները յետ չառնենք թոյլ չէնք տայ որ տանէք, մի ուրիշը մի այլ բան, մի ուրիշը ձեզ չենք ճանաչում. պ. Արշալոյսը ասաց ինձ չճանաչել նշանակում է Դաշնակցութեան հայհոյել. այդ միջոցին սկսեցին գործել չօմախները, յետոյ օդի մէջ փայլեցին մաւզերները առանց հարցնելու արդարն ու մեղաւորը, երիտասարդն ու ծերը, թրափ հա թրոփ նախ գետին փռուեց Իսաղուլու տղայ Հայրապետը, որ նշանուած էր և աշունքին հարսանիք պիտի անէր, յետոյ երեսփոխ Յովհաննիսի տղայ Սահակը, որ նոյնպէս երիտասարդ էր։ Վերոյիշեալները անմիջապէս մեռան։ Շատ ծանր վիրաւորուեց Յովհաննէս երեսփոխը, դժուար թէ լաւանայ. և թեթև վիրաւորուեց Տէր Յովհաննեսի թոռ Վահանը վերջինս կարելի է որ լաւանայ [1])։ Մնացած գիւղացիք կալերից փախան ժտան տները, ուր կարողացան ազատել իրանց ջանները։ Իսկ մարդասպանները բարձրացան գերեզմանատան բլրի վրայ, որ գրանում է գիւղի յանդիմանը 300-350 քայլ հեռու և բարձր է գիւղից. այդ տեղից կապեցին գիւղը գնդակի, կարմիր գնդակը տեղաց առաւել քան մի ժամ. ներքի գիւղից, որ մի ձիու մէյտան հեռաւորութեան վրայ է գտնուում, հրացանների ձայները լսելով՝ կոգակները եկան մարդասպանների ձիանները տարան յանձնեցին տէրտէրին. ապա նրանք գնացին Լառ.

Նոյն օրը Լառեցի Հայրապետի տղայ Թովմասին դասիդ ուղարկեցին Թէհրան, նամակները ուղղուած էին Տօքթօր Ստեփանեանի հասցէին, որի կողմից և եկել էին մարդասպանները։

Այդ պարոնները շարունակ մեզ պատմում էին թէ Հայաստանում ինչպէս Քուրտերը կոտորեցին հայերին. այդ հասկանալի է թէ Քուրդերը կոտորում են հայերին, այդ շատ հասկանալի է, որովհետև նրանք ազգային թշնամիներ են իսկ Դաշնակցականները որպէս հայեր՝ Քրդերից աւելի Քուրդ, են ինչ զ՝ազանութիւն երկուսի մէջ։

«Արշալոյս» «Լուսիչ» և այլն այլն անուններ ունեցող պարոնը երեք տարի շարունակ ուսուցչութիւն է արել Թէհրանում։ Ասում են որ արձակուրդների ժամանակ Դաշնակցութեան կողմից ,,կազմակերպելու համար'' գնացել է Սպահան, Համատան, Ռաշտ, և...Աչքը լոյս Թէհրացիների, որ իրանց երեխաները մարդասպանի են տուել կարդացնելու, այն էլ երեք տարի։ Աշակերտներն անշուշտ ըստ խրատի և ըստ դաստիարակութեան՝ պիտի նմանին իրենց «հռչակաւոր» «վարժապետին»։

Ղարաղանցի.

*) Տես «Միտք» № 30

[1]) Խիստ փառաւոր ազգային ինքնապաշտպանութիւն է։ Մի քանի տարի որ էսպէս շարունակեն, այլ ևս Տաճիկներին բաժին չեն թողնի հայ ջարդելու։ Իտիհատի հայաջարդ հոգին թաղել է «փրկիչներ» վրայ։

բոն Յովսէփ Միրզաեանցի հետ, որ նա է լինելու մեր միակ պատգամաւոր-ներկայացուցիչը։ Եւ եթէ երբէք մենք էլ յանդգնութիւն ունենանք մի ուրիշ ոև է անձնաւորութեան անունը յիշելու, այն ժամանակ մեր պայմանը կը նկատուի լուծուած ու մենք կենթարկուենք մեծամեծ տուգանքների և...։

Թուականէս երեք օր առաջ Դարվազէ Շահաբ-տուլազիմ թաղում, բոմբերի պայթումից բնակիչները միջում քանդուեց 3 տուն, մինչ այժմ փլատակների տակից հանուել է մօտաւորապէս 10 դիակ։ Ասում են, որ դեռ էլի կայ, բայց վախենում են փորել, որպէսզի մնացած բոմբերը էլի չը պայթեն։

Հոկտ. 4 Ռաշտ

Անապահով դրութիւն.

Սեպտ. 30-ի գիշերը հրդեհը կը-լանեց քաղաքիս մնացած նշանաւոր քարվանսարաներից մէկը նորակառոյց քամբանէն, որտեղ չորս-հինգ ամիս սրանից առաջ պատահած հրդեհից յետոյ, կենդրոնացել էին հարուստ վաճառականները, որպէս ապահով տեղ։ Քարվանսարի մերձակայ խանութներից այրուել են մօտ քսանը։ Այլ և երկու գեղարան, երկու հացի փուռ։ Վնասը տասնեակ հազարների է հասնում։

Յաճախակի պատահող հրդեհները սովորական երևոյթներ են դարձել։ Քաղաքը սարսափով է գիշերները լուսացնում. կարծես այս վերջերս դիտմամբ են կրակ տալիս։ Բառի բուն նշանակութեամբ գոյքի ապահովութիւն չկայ միանգամայն։

Կառավարութիւնը ոչ մի միջոց մինչև օրս ձեռք չէ առել, կցանկանք գոնէ այսուհետ արգելիչ միջոցներ ձեռք առնէր ժողովրդին թշուառութիւնից ազատելու։

Մարդկային զազանութիւն.

Ամսոյս 3-ի գիշերուայ ժամը 9-ին Վասիլ մականունամբ Դաշնակցական ղոչի, իւր անցեալով յայտնի մի «հերոս» որոնցով վիստում են Դաշ-կան շարքերը, թաղատատեղից յանկարծակի յարձակուում է Համադանցի և բանդիրօլի գործում ծառայող Ցարութիւն անունով մի երիտասարդի վրայ դաշոյնով մի քանի տեղից խոցոտում ու անյայտանում։ Վիրաւորը անմիջապէս մեռնում է։ Միջոցներ են ձեռք առնուած ձերբակալելու զզուելի չարագործին։

Սպանուող պատանին մօր, փոքր քոյրերի միակ աշխատող ձեռքն էր։

Չարագործը մի երկու ամիս առաջ նոյնպէս ծառայում էր բանդիրօլի գործում, վերջերս արձակուած էր։ Սպանութեան պատճառը թշնամական-վրէժինդրութիւնն է։

Կեցցէ Դաշնակցութիւնը իւր սնուցած մարդասպաններով։

Կլինի՞ վախճան այս խայտառակութեանց։

Նորեկ

---

5 Հոկտեմբեր Թէհրան

Թշնամու բանակներով շրջապատուած

Հազիւ հազ քաղաքը մասնաւոր հանդարտուելով սկսել էր կեանքը նորմալ ընթացք ստանալ, որ ահա յանկարծ կենտրոնական կառավարութեան ըմբոստ բանակի հրամանատարների կողմից, Նօբարանից, ստացուեց մի հեռագիր, որպիսին նրանք նախապէս հեռագրել էին նաև Քիրմանշահից։ Եւ հեռագրելուց անմիջապէս յետոյ ըմբոստ բանակը բաժանուելով երկու մասի՝ սկսում է առաջանալ։ Մի մասը գալիս է Ղում ճանապարհով, իսկ միւսը շոսսէյի Քերեջի ճանապարհով։ Ըմբոստ բանակի մինչ Նօբարան (որը քսան ֆարսաղով հեռու է Թէհրանից) տարբեր և կողմնակի ճանապարհներով առաջանալը չեն իմացել ոչ կամաւոր բանակը և ոչ էլ կառավարութիւնը, որոնք յանկարծակի են գալիս, երբ ստանում են Նօբարանի հեռագիրը. նոր միայն մեր «արթուն» կառավարութիւնն իմանում է, որ մօտ երկու հազար հոգիանոց մի բանակ շրջում երկրի մէջ՝ մօտենում մայրաքաղաքին և ոչ ոք այդ մասին ոչինչ չի իմանում։

Թէպէտ և այդ լուրը երկու օր ծածուկ է պահուել ժողովրդից, բայց և այնպէս երրորդ օրը անկարելի է եղել պահել։ Մայրաքաղաքում զինուորական դրութիւն յայտարարուեց ճիշտ այն ծրագրով, ինչ որ արել էր Մօրկան Շուսթէրը։ Քաղաքացիների գլուխները տրուել են թնդանօթներ, և համարեա կառավարութեան բոլոր զինուորական ոյժը-կոզակ, հին ու նոր ժանդարմ Բախթիարցի և այլն- առ այժմ համախմբուում է Շահրը նօվ, այս օր այդտեղից էլ վերոյիշեալ երկու ուղղութեամբ բանակներ պիտի ճանապարհուեն ընդ առաջելու թշնամի բանակներին։ Ըստ երևոյթին այս անգամ կառավարութիւնը այնքան չի վախենում այդ հզօրացած ըմբոստ բանակներից, որքան որ քաղաքի բընիկ ժողովրդից։ Դրա պարզ ապացոյցը այն է, որ այս անգամ Մէջլիսի մէջ էլ լեցրել է զինուորներ. իհարկէ այն ենթադրութեամբ, որ ըմբոստները Թէհրանը շրջապատելու դէպքում տեղացիները բարձրանալով չդրաւեն այդ հսկայ դիրքը որ գտնուում է մայրաքաղաքի ճիշտ կենտրոնում։

Կառավարութեան կամաւոր բանակի մի մասը գտնուում Քիրմանշահ իսկ միւսը Համադան։ Կամաւորների մէջ են և հայերը. վերջիններին հրահանգուել է որ ըմբոստ բանակի հետապնդելով առաջանան դէպի Թէհրան։ Տեղիս Դաշնակցականներն ևս իրար անցած պատրաստուում են օգնելու կառավարութեան։ Իսկ Ս. Դ. Հնչակեանները միմիայն ինքնապաշտպանութեան մասին են մտածում և ուրիշ ոչինչ։

Իսկ մի այլ կողմից էլ Հիւսէյն Զադէն մի ուրիշ Ֆրանսիական կըրթութիւն ունեցող երիտասարդ Պարսկի հետ (որի անունը մոռացել եմ) առաջանալով հասել են 11 ազաճ հեռու Թէհրանից, Տամավանտ կոչուող գիւղաքաղաքը և զինաթափ անելով կառավարութեան 50-ի չափ զինուորներին՝ հեռագրել են Թէհրան, որ իրանք ոչ թալանչիներ են ոչ մարդասպան, և ոչ էլ պետական դաւաճաններ, այլ երկրի կարգ ու կանոնին նախանձախնդիր քաղաքացիներ, որոնք կամենում են դալ Թէհրան և մինիստրական կազմի որոշ փոփոխութիւններով բացել Մէջլիսը, որով կը վերականգնի կարգը ընդհանուր երկրի մէջ։

Սակայն կառավարութիւնը այնքան էլ ուշադրութիւն չի դարձնում վերջիններին, նա ամբողջ ոյժով աշխատում է ճնշել առաջիններին, չնայելով որ նրանք էլ երկու հարիւրից աւելի թիւ են կազմում. այդ թուի մէջ մի քանի հայեր ևս կան. որքան հետաքրքրուեցի հազիւ կարողացայ մէկի անունը իմանալ։ Նա կոչւում է Ռուբէն, ու այդ պարոնները թէհրանից գնացած խոռովեալ Դաշնակցականներն են։ Երբեմի կամաւորները երթալով միանում են ըմբոստներին կռուելու կառավարութեան դէմ, իսկ միւս մասը կառավարութեան դրօշակը իրենց պատանք շինելու աստիճան աշխատում է նրա օգտին։ Ինչով բացատրել այդ, և կամ ինչ անուն տալ դրան։ Դոնէ ես դժուարանում եմ։

Հեռագրուած է Սպահան, որ շուտափոյթ օգնութեան հասնի կառավարութեան 500 Բախթիարցիների մի վաշտ։

Կէս օրից յետոյ պատերի վրայ երևացին պաշտօնական յայտարարութիւններ, որոնք զգուշացնում էին հասարակութեան որ գիշերուայ ժամի 10-ից յետոյ գիշերուայ անուն չունեցողներին անխտիր բռնոտելու են։ Սահմանադրութիւնը վերացրել էր այդ անունը, որ այս օր առաջին անգամ լինելով էլի սկսուեց։

6 Հոկտեմբերի

Գիշերս մինչև լոյս հեծելաշրջիկ խումբեր շրջեցին քաղաքի բոլոր փողոցներում։

—Այս օր քաղաքացիները մինչ ժամի 10-ը փակ էին, ոչ կարելի էր ներսից դուրս գնալ, ոչ էլ դրսից ներս։

—Կառավարութեան կողմից կանչուած նախկին Մէջլիսի անդամ դէմոկրատ լիդէր՝ յայտնի Սուլէյման Միրզան տեղս է հասել, հետզհետէ և գալու են միւսները։

—Համեմատաբար այս օր քաղաքը բաւական խաղաղ է, խանութները կամաց-կամաց սկսում են բացուել։

—Բոլոր հացագործների առաջ լիքը բազմութիւն է, հացի պակասութեան պատճառով։

Տ. Բ.-եան

ՊԱՏԵՐԱԶՄԸ ԲԱԼԿԱՆՆԵՐՈՒՄ

Հեռագիրներ թէ թերթեր պարբերաբար մեզ բերում են հոգեպարար և միխթարական լուրեր, որովհետև միշտ աւետում են ազնիւ դատի համար մարտնչող Բալկանների պանծալի յաղթութիւնները՝ ընդդէմ մեծախօս և կործանարժան Տաճիկների։

Ռազմատենչ Զերնօգորիան սահմանային բոլոր ամրութիւններից յետ է շպրտել Տաճիկներին, յաղթանակաւորէն խլելով նոցանից Տուզ և այլ տեղեր, վերցնելով 10 հազար գերիներ. Անվեհեր Սերբիան իր հարևանութիւնից քշել է Տաճիկներին և փոթորկօրէն հասել գրաւել է Նովօ-Բազարը։ Փոքրիկ Յունաստանի յաղթական դրօշները ծածանուում են Էլիսսայից դուրս։ Ահարդու Բոլգարիան մրրիկի նման արշաւելով՝ Մուստաֆա փաշան, Կրիս Քիլիսան և Ադրիանապօլսի 5 ամրութիւններն է խլել և իւր փառաւոր դաշնակիցների հետ պատրաստուում է արշաւել Պոլիս։

Երանի՞ այն օրուան, երբ կաւետեն, որ Պոլիսը, ժամանակակից Տաճիկ Սարդանապալների այդ ատելի Նինուէն՝ փռուած կլինի Բալկանների պանծալի զօրքերի յաղթական ոտքերի առաջ։

Մինչ յաղթող Բալկանները գերեալ Տաճիկներին խնամում են հիւանդանոցներում, անդին Օսմանցին սրածում է իւր վերցրած սակաւաթիւ գերիներին կամ անձնատուութեան սպիտակ դրօշ պարզելով և խաբկանքի ենթարկելով գերելու եկող յաղթող Բալկանցոց, յանկարծ համազարկ է բաց անում նոցա վրայ։

Ըստ լրոյ Զերնօգօրական անվրկանդ արշայազն Դանիլօն գերուած է Տաճիկներից։ Ցարդ դաշնակիցները, ըստ լրոյ, Տաճիկներից վերցրել են 50.000-ից աւելի գերիներ։ Լսում ենք Անգլիական 8 ռազմանաւեր մտնելով Պոլսի ջրերը, հրաման են ուղարկել յաղթական Բոլգարիային չարշաւել Պոլիս։

Մեր լաւագոյն բարեմաղթութիւնները Սլաւ փոքրիկ պետութիւններին։ Ցաւում ենք, որ աշխարհագրական տարածութիւնները բաժանում են մեզ և հնար չեն տալիս, որ մենք ևս զինակցենք քաջարի Բալկաններին ընդդէմ ջարդարար Տաճիկների։ Մի ժողովուրդ որ կուուում է յանուն ճնշուածների ազատութեան, յանուն սուրբ նպատակի, նա անպարտելի է։ Թող փոքրիկ, բայց փառահեղ ու մարտիկ դաշնակիցների յաղթական դրօշակները լիազատ ծածանեն տապալուած կիսալուսնի վրայ և հռչակեն ազատ օրեր ու վառ արշալոյս բազմատանջ Մակեդոնիոյ և տառապող բոլոր քրիստոնեայ ժողովուրդների համար։

ԼՈՒՐԵՐ

ԹԱՒՐԻԶ

Փոխանորդ Կար. քահ. Մանուկեանը ամսոյս 12-ին շրջաբերական մի գրութեամբ՝ ուղղած քաղաքիս ազգ. երեք դպրոցների հոգաբարձութեանց՝ առաջադրել էր 13-ից, ի յիշատակ տառերի գիւտի 1500-ամեայ և տպագրութեան 400-ամեայ յոբելեանի, դասերը դադրեցնել դպրոցներում, սաներին բերել պատարագին։ Հոկտ. 13-ին դասերը դադարել էին։ Ղալա և Լիլաւա թաղերի սաներն ու ուսուցիչները եկել էին մայր եկեղեցի։ Բացառութիւն էին կազմում դարձեալ կեդրոնականցիք։ 14-ին, կիրակի դպրոցների սաներն ու սանուհիները ներկայ էին մայր եկեղեցում՝ պատարագին։

☙ Հակառակ առաջնորդարանի կողմից եղած կրկնակի հրաւէրների, թեմական խորհրդի նիստեր չեղան երկու շաբաթուայ ընթացքում. նիստ կայացել է միայն Հոկտ. 19-ին

☙ Թեմ. ժողովը ընդհատեց իւր «հռչակաւոր» նիստերը հ. Մ. Թանգեանին առաջնորդ ընտրելուց յետոյ։

☙ Ցորենը գնալով թանգանում է։ Նորէն հրաւիրում ենք Հայի Շօջաէդ-Դովլի և Սփահդարը Ազամի ուշադրութիւնը։

☙ Թէհրանի ազգայէն խորհուրդը Ազնա և Սէյդաւուն գիւղերի թալանները յետ դարձնելու համար ազդու դիմումներ է արել քաբինէին։ Քաբինէն չլսելով եղած դիմումը, ազգ. խորհուրդը մի ընդարձակ հեռագրով մեր թեմ. խորհրդից (??) խնդրում է աջակցել և ոյժ տալ իրենց դիմումին։

Խմբագիր-հրատարակիչ՝
Ա. Տ. Վարդանեան